Արձանագրություն N 3

«ՀՀ ՏՋՆՆ-ԳՀԾՁԲ-17/4» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի
(Գրասենյակային հաշվողական սարքերի պահպանման
և վերանորոգման ծառայությունների)

ք. Երևան

04 հուլիսի 2017թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝
հանձնաժողովի
նախագահ՝ Ա.Գրիգորյան
քարտուղար՝ Մ.Գրիգորյան
անդամներ Գ.Սիմոնյան, Գ.Ալոյան, Ա.Մկրտչյան, Վ.Ղազարյան

1. «ՀՀ ՏՋՆՆ-ԳՀԾՁԲ-17/4» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հայտերի հետագա գնահատման մասին

1.1 Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 2017թ. հուլիսի 3-ի թիվ 03/26-1/12018-17 գրություն պարզաբանումը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի և 41-րդ կետի պահանջները՝ հանձնաժողովը որոշեց.

«Այ Սերվիս» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ հաշվի առնելով, որ մասնակցի կողմից վճարման պահանջագրում տվյալները լրացված են թերի:

Ընդունել ի գիտություն, որ «Բևեռային ուղի» ՍՊԸ-ն 04.07.2017թ. գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլ. փոստի հասցեին ներկայացրել է շտկված էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված գնացուցակը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, հանձնաժողովը որոշեց.

«ՀՀ ՏՋՆՆ-ԳՀԾՁԲ-17/4» ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «Բևեռային ուղի» ՍՊԸ-ին և 2-րդ տեղ զբաղեցնող ճանաչել «Ստարտկոպի» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

1.2 Առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ

ենթակետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնելու 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, որից հետո սահմանված կարգով հանձնաժողովի անդամներին կտրամադրվի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի գնահատաման թերթիկները և հարկային պարտավորությունների մասին եզրակացությունը:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա.Գրիգորյան

քարտուղար՝ _____ Մ.Գրիգորյան

անդամներ՝ _____ Ա.Մկրտչյան

_____ Գ.Սիմոնյան

_____ Գ.Ալոյան

_____ Վ.Ղազարյան